



ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն № 15-Ա

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք>> սահմանադրական օրենքի 39-րդ հոդվածի, 84-րդ հոդվածի 11-րդ մասի, 89-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ կետերի, Բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի հուլիսի 12-ի թիվ ԲԴԽ-25-Ո-58 որոշման 1-ին հավելվածի 19-րդ կետի 11-րդ ենթակետի՝

1. Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտի, նրա առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանուների կողմից Բարձրագույն դատական խորհրդի նախագահին, Բարձրագույն դատական խորհրդին քննարկման, հաստատման, որոշումների կայացման վավերացման համար նախատեսված ֆինանսական, բյուջետային, նյութատեխնիկական ապահովմանն, պետական գնումներին առնչվող բոլոր փաստաթղթերը ներկայացնել բացառապես Բարձրագույն դատական խորհրդի նախագահի խորհրդական Ռշտունի Ասիկյանի հետ նախնական քննարկումից հետո:

2. Դատական դեպարտամենտի ղեկավարին՝

Ապահովել օրենքով սահմանված ժամկետներում ֆինանսական, բյուջետային, նյութատեխնիկական ապահովմանն, գնումների գործընթացին առնչվող անհրաժեշտ փաստաթղթերը և հանձնարարել ենթակա ստորաբաժանումների ղեկավարներին, պահանջի դեպքում, Բարձրագույն դատական խորհրդի նախագահի խորհրդական Ռշտունի Ասիկյանին տրամադրել լրացուցիչ տեղեկատվություն քննարկվող հարցերի վերաբերյալ:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը հանձնարարել Բարձրագույն դատական խորհրդի նախագահի խորհրդական Ռշտունի Ասիկյանին:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

2021թ. ապրիլի 21
ք. Երևան

Գ. ԶԱԽԱԳԻՐՅԱՆ